ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2025 թվականի N 60-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 05.03.2025Թ ԹԻՎ 392-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերի պահանջները,Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Առաջարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին՝ վերջինիս 05.03.2025թ թիվ 392-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Հրամանով հաստատված 1-ին հավելվածի արձանագրություն 9-ի «Որոշվեց» բաժնի 1-ին կետով հաստատված փոխադրավարձերի աղյուսակում ավելացնել՝ «Արգել - Նոր Հաճն, Նոր Հաճն - Արգել միջանկյալ կանգառ 150 դրամ փոխադրավարձ» տողը և երթուղուց օգտվող որոշակի խմբերի (ուսանողներ, թոշակառուներ, ժամկետային և պայմանագրային զինծառայողներ, հաշմանդամության և անապահովության կարգ և այլն) նկատմամբ կիրառել արտոնություններ,

2) Հրամանով հաստատված 22-րդ հավելվածի «Արգել - Նոր Հաճն - Երևան» ուղղությամբ շարժման չվացուցակում կատարել փոփոխություն՝ աղյուսակի 3-ից 10-րդ տողերով սահմանված 20 րոպե պարբերականությունը փոխարինելով 10-ից

15 որպե պարբերականությամբ՝ համապատասխանաբար համալրելով նաև տրանսպորտային միջոցների քանակը:

2. Համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուղեկցող գրությամբ դիմել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին սույն նախագծով նախատեսվող փոփոխությունները կարատելու միջնորդությամբ:

Կողմ -15 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷՄՄԱ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ